ՍՈՒՐ ԱՀԱԶԱՆԳ

ԻՆՉՊԵ՞Ս ԹՌՉԵԼ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Օդանավով Երևանից Արցախ մեկնելը լուրջ պրոբլեմ է դարձել։ Ըստ որում՝ պրոբլեմն առկա է ամիսներ շարունակ և հատկապես սրվել է Հայաստանի ու Արցախի շրջափակման հետևանքով։ Ցավալի է, իհարկե, որ այս հարցին ոչ մեկը ուշադրություն չի դարձնում, ոչ մեկը լրջորեն չի մտածում այն մասին, թե Հայաստանում ապրող տասնյակ հազարավոր արցախցիներ ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով պետք է հաղորդակցվեն Արցախում ապրող իրենց հարազատների հետ, բայց առավել ցավալի է, որ օդանավակայանի աշխատողները ժողովրդի համար այս դժվարին կացությունը իրենց գրպանները լցնելու միջոց են դարձրել։ Դատեք ինքներդ. Ստեփանակերտ մեկնելու համար ցուցակագրվել ենք դեռևս հոկտեմբերի 29-ից, բայց դրամարկղերից մինչև օրս չենք կարողացել տոմս վերցնել, չնայած երբեմն օրական 10—15 ինքնաթիռ է մեկնում Ստեփանակերտ։ Ո՞ւմ են տրվում դրանց տոմսերը։ Շար լեզուներն ասում են՝ նրանց, ովքեր կարողանում են օդանավակայանի աշխատողների հետ լեզու գտնել։ Իսկ այդ «լեզու գտնելը» արժե 25—100 ռուբլի։ Ով տալիս է, նա էլ գնում է։

Բողոքելով այդ երևույթի դեմ, պահանջում ենք հսկողության տակ առնել օդանավակայանների աշխատանքը, առանձնապես՝ դեպի Արցախ չվերթերը։ Բողոքում ենք հատկապես օդանավակայանի աշխատողներից, և ոչ միայն շորթումների, այլև կոպտության, անօրինական գործելակերպի համար և հույս ենք փայփայում, որ մեր բողոքը անհրաժեշտ արձագանք կգտնի։

(Նամակի տակ ստորագրել է 52 մարդ)